Հաստատում եմ

<<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> պետական

բժշկական քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ՝

_____ Ռ. Սարգսյան

<<01>> հունիսի 2022թ

<<ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ>> ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Պրակտիկան ուսուցման գործընթացի կազմակերպման ձև է, որը նպաստում է կրթական ծրագրի յուրացմանը, սովորողների կողմից ապագա մասնագիտական գործունեությանը բնորոշ որոշակի աշխատանքների տեսակների կատարմամբ և նպատակաուղղված է ձևավորելու, ամրապնդելու և զարգացնելու գործնական հմտությունները:

Պրակտիկ ուսուցման կազմակերպումը

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկան իրականացվում է միջին մասնագիտական կրթության չափորոշիչներին համապատասխան:

1.2 Պրակտիկայի բովանդակությունը որոշվում է յուրաքանչյուր մասնագիտության գործող ծրագրերի համապատասխան, որոնք մշակվել են պրակտիկայի բազայի ներկայացուցիչների հետ համատեղ և հաստատվել են ուսումնական հաստատության կողմից:

1.3 Պրակտիկայի պլանավորումը և կազմակերպումը իրականացվում է ուսումնական հաստատության կողմից, հանրապետության առողջապահության և կրթության նախարարությունների ուսումնական և արտադրական պրակտիկաների մասին հրամանների հիման վրա, ինչպես նաև պրակտիկայի բազա համարվող առողջապահական հիմնարկների հետ պայմանագրերի հիման վրա:

1.4 Նախատեսվում են պրակտիկայի հետևյալ տեսակները՝

- ուսումնական պրակտիկա
- արտադրական պրակտիկա, որը բաժանվում է մասնագիտական և նախադիպլոմային պրակտիկաների

1.5 Պրակտիկան իրականացվում է մի քանի փուլով՝ տեսական գիտելիքների և մասնագիտական գործունեության հաջորդականությամբ:

1.6 Պրակտիկայի կազմակերպումը և հսկողությունը դրվում է ուսումնական հաստատությունների պրակտիկայի գծով տեղակալի վրա:

1.7 Պրակտիկայի բոլոր ձևերի իրականացման համար ուսումնական խումբը բաժանվում է ենթախմբերի ոչ պակաս քան 8-13 ուսանողներ:

2. Ուսումնական պրակտիկայի կազմակերպումը և իրագործումը

Ուսումնական պրակտիկան

- համարվում է մասնագիտական մոդուլի յուրացման փուլ
- ուղղված է ուսումնական և պրակտիկ հմտությունների ձեռքբերմանը և ձևավորմանը
- իրագործվում է պրակտիկայի բազաներում

2.1 Ուսումնական պրակտիկային թույլատրվում են մասնակցելու մոդուլի թեմաներից և տեսական պարապմունքներից ստուգարք ունեցող ուսանողներին:

2.2 Ուսումնական պրակտիկայի անցկացման հսկողությունը դրվում է մասնագիտական մոդուլի դասախոսի վրա:

2.3 Ուսանողների գործունեության արդյունքները գնահատվում են ամեն օր և գրանցվում դասախոսի կողմից՝ ուսումնական մատյանում:

2.4 Ուսումնական պրակտիկայի տևողությունը կազմում է օրական 6-8 ակադեմիական ժամ, շաբաթական 40 ակադեմիական ժամից ոչ ավելի: 1 ակադեմիական ժամը 45 րոպե է:

2.5 Պրակտիկ պարապմունքներից բացակայությունը ուսանողը լրացնում է անհատական ժամանակացույցով:

2.6 Ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողը լրացնում է օրագիր և այցելուի կամ հիվանդի հետազոտման քարտ:

2.7 Ուսումնական պրակտիկան ավարտվում է ընդհանուր և մասնագիտական հմտությունների յուրացման գնահատումով՝ տարբերակված ստուգարքի ձևով, որը ընդունում է բոլեջի պրակտիկայի գծով փոխտնօրենը /ղեկավարը/ ուսանողի ստուգման գրքույկում և գնահատման տեղեկագրում գրանցում կատարելով: Դրանց արդյունքով ձևավորվում է ուսումնական պրակտիկաների ամփոփիչ գնահատական /միջին թվաբանականի տեսքով/, որը մտնում է միջառարկայական և /կամ/ մասնագիտական ընդհանուր գնահատման մեջ:

3. Արտադրական պրակտիկայի կազմակերպումը և իրագործումը

Արտադրական պրակտիկան ուղղված է

- պրակտիկայի պահանջների կատարմանը, յուրացմանը և որակավորման շնորհմանը
- ուսանողների կողմից մասնագիտական գործունեության բոլոր ձևերի յուրացման անընդհատությանը և շարունակականությանը:
- ընտրած մասնագիտության գծով մասնագիտական գործունեության բոլոր ձևերի պրակտիկ հմտությունների ձեռքբերմանը, ամրապնդմանը և ընդարձակմանը:

3.1 Ուսումնակրթական հաստատության պրակտիկայի բաժնի ղեկավարը պատրաստում է տեղեկատվական-մեթոդական նամակ բժշկական կազմակերպության պրակտիկայի բազայի համակարգողին, որի հիման վրա պրակտիկայի բազայի համակարգողը նշանակում է պրակտիկայի ընդհանուր և անմիջական ղեկավարներին:

3.2 Պրակտիկայի ղեկավարը վերահսկում է բժշկական հաստատությունում պրակտիկայի բազաներում պրակտիկայի անցկացման պայմանները և ծրագրի իրագործումը:

3.3 Արտադրական պրակտիկայի ընթացքում ուսանողների աշխատանքի կազմակերպումը և պրակտիկայի ծրագրի կատարման հսկողությունը իրականացվում է պրակտիկայի ղեկավարի կողմից: Արտադրական պրակտիկայի ուսումնական խմբի անմիջական ղեկավարությունը որոշվում է դասախոսի տարեկան մանկավարժական ծանրաբեռնվածությամբ:

3.4 Արտադրական պրակտիկային ուսանողները թույլատրվում են ուսումնակրթական հաստատության հրամանով՝ ուսանողների առաջադիմության արդյունքների հիման վրա:

3.5 Արտադրական պրակտիկայի մասնակցող ուսանողը նախօրոք պետք է ունենա աշխատանքի թույլտվությամբ՝ բժշկական քարտ:

3.6 Արտադրական պրակտիկայի ժամանակ ուսանողը պետք է դժբախտ պատահարներից պարտադիր ապահովագրված լինի:

3.7 Արտադրական պրակտիկային ուսանողի մասնակցած ժամերը գրանցվում են պրակտիկայի ուղեգրում անմիջական ղեկավարների կողմից:

3.8 Արտադրական պրակտիկայի բոլոր ձևերի արդյունքները գրանցվում են արտադրական պրակտիկայի մատյանում:

3.9 Արտադրական պրակտիկան ավարտվում է յուրացված հմտությունների ատեստացիայով /տարբերակված ստուգարք/՝ հանձնաժողովի՝ ամեն փուլի էտապի մասնագետներ ընդգրկելով և հանրագումարային գնահատականով՝ ուսանողի ստուգման գրքույկում և գնահատման տեղեկագրում գրանցում կատարելով:

4. Ուսանողների արտաքին տեսքի և կեցվածքի պահանջները

Ուսումնական պրոցեսի ընթացքում քոլեջում աշխատանքային նորմալ մթնոլորտի ստեղծման, սանիտարահիգիենիկ նորմաների, ուսանողների մոտ էսթետիկական ճաշակի, ձևավորման, հագուստի կուլտուրայի, քոլեջի գործունեության առանձնահատկությունները, սովորույթներն ու ավանդույթները հարգելու նպատակով՝ ուսանողների համար սահմանվում են հագուստի հետևյալ ձևերը.

• տեսական պարապմունքների ժամանակ ուսանողները պետք ՝ ունենան սպիտակ բժշկական խալաթ, գլխաշոր-կալպակ և հերթափոխային կոշիկ:

• Գործնական և պրակտիկ պարապմունքների ժամանակ բժշկական խալաթ /կամ երկարաթև բժշկական կոստյում/ բժշկական գլխարկ-կալպակ, հերթափոխային կոշիկ /դիմակ և բժշկական ձեռնոցներ անհրաժեշտության դեպքում/:

• Խալաթի երկարությունը մինչև ծնկները, թևերը երկար կամ ¾ չափի:

• Հերթափոխային կոշիկը /մասնագիտական բժշկական/ առանց կրունկների կամ ցածր կրունկներով /անվտանգության տեխնիկայի պահպանման նպատակով/:

Աղջիկների համար հագուստը կարող է դասական ոճի վարտիք, բլուզ և կիսաշրջազգեստ կամ շրջազգեստ՝ երկարությունը մինչև ծնկները:

Տղաների համար՝ տաբատ, ջինս դասական ձևով և վերնաշապիկ: Հագուստը միշտ պետք է լինի մաքուր, արդուկած և պատշաճ:

Բժշկական խալաթը, գլխարկը և հերթափոխային կոշիկը պարտադիր են քոլեջի ուսանողների համար բոլոր տեսական և գործնական պարապմունքների, ինչպես նաև ուսումնական և արտադրական պրակտիկայի ժամանակ:

Արտադրական պրակտիկայի ժամանակ ուսանողները պետք է կրեն բեյջեր՝ ազգանվան, անվան և ուսումնական հաստատության նշումով:

Ուսուցման ամբողջ ընթացքում չի թույլատրվում՝

• շորտեր, մինի կամ մաքսի շրջազգեստներ, ինչպես նաև տեղին ու սեզոնին անհամապատասխան հագուստ:

• Ֆիզկուլտուրայի համար նախատեսված սպորտային հագուստ:

• Տարբեր կրոնական դավանանքներին յուրահատուկ և սիմվոլացնող հագուստ:

• Երկար բաց թողնված մազեր:

• Առատ զարդարանքներ, մեծ ականջօղեր, վառ մանիկյուր, պիրսինգ և այլն: